2/26.911635

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
Տ. ՍԻՄՈՆՅԱՆ

«01» 02 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0027-21

Ձեռնարկողը՝ «ԱԼՎԻՆԱ ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՓԲԸ
Արմավիրի մարզ, ք. Արմավիր, Թումանյան փ. 36

Գործունեությունը՝ ***Ծաղկաձոր քաղաքի Խ. Մուրադյան փող. 3 հասցեում «ԱԼՎԻՆԱ» հյուրանոցային համալիրի որպես բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի վերակառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտ***
Կոտայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0027-21

<<01>> 02 2021թ.

Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքի Խ. Մուրադյան փող. 3 հասցեում «ԱԼՎԻՆԱ» հյուրանոցային համալիրի որպես բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի վերակառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի

Ներածական մաս

Ձեռնարկող՝ «ԱԼՎԻՆԱ» ՓԲԸ

Ներկայացված նյութեր՝ Նախնական գնահատման հայտ «Գ» կատեգորիա

Տեղադրման վայրը՝ Կոտայքի մարզ, ք. Ծաղկաձոր, Խ. Մուրադյան փող. 3.

«ԱԼՎԻՆԱ» հյուրանոցային համալիրի վերակառուցումը որպես բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի նախատեսվում է իրականացնել Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքի Խ. Մուրադյան փող. 3 հասցեում:

Նախատեսվող գործունեությունը՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի «ա» ենթակետի, հանդիսանում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Համաձայն նախնական գնահատման հայտի՝ նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը կառուցվելու է անշարժ գույքի սեփականության իրավունք ունեցող 1.3989 հա ընդհանուր մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնականը՝ բնակելի կառուցապատման:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն, տվյալ միջավայրում ներդաշնակ է շրջակա կառույցներին և շրջակա բնակչության համար չի հանդիսանում վիզուալ տեսադաշտի խոչընդոտ:

Նկարագրական մաս.

Նախատեսվող գործունեության ենթակա տարածքը գտնվում է Փամբակի լեռնաշղթայի միջնամասից դեպի հարավ-արևելք տարածվող Ծաղկունյաց լեռների Թեղենիս լեռան արևելյան լանջին, Տանձաղբյուր գետի հովտի աջ թևում՝ թեք դեյուվիալ լանջի վրա, 1740 - 1800մ բարձրությունների սահմաններում:

Կառուցապատման ենթակա մակերեսը կազմելու է 3150, իսկ անջրանցիկ (ճանապարհներ, սալվածքներ) մակերեսը՝ 4239մ^2:

Բազմաֆունկցիոնալ համալիրը նախատեսվում է կառուցել երեք մասնաշենքից:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ "ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER" SNCO * РА ГОСУДАРСТВЕННЫЙ ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ" ГНКО * РА ЕРЕВАН 02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

Վերակառուցվող առաջին մասնաշենքն իր մեջ ներառելու է մեկ նկուղային և ինը վերգետնյա հարկեր: Հարկի մակերեսը կազմելու է 1875մ², շինության ամբողջ մակերեսը՝ 18900մ²: Նախատեսվող բնակարանների ընդհանուր թիվը՝ 352:

Երկրորդ նոր մասնաշենքը բաղկացած է լինելու մեկ նկուղային, վեց վերգետնյա հարկերից: Հարկի մակերեսը կազմելու է 510մ² և շինության ամբողջ մակերեսը՝ 3570մ²:

Երրորդ նոր մասնաշենքը նախատեսվում է մեկ նկուղային և ութ վերգետնյա հարկերով: Հարկի մակերեսը կազմելու է 755մ², իսկ շինության ընդհանուր մակերեսը՝ 6795մ²:

Կառույցի առաջին վերգետնյա հարկը, որը համապատասխանում է նախագծի ±0,00 նիշին, նախատեսված է որպես համալիրի հասարակական հարկ:

Երկրորդ և երրորդ մասնաշենքերում նկուղային հարկերը նախատեսված են որպես ավտոկայանատեղի, իսկ վերգետնյա հարկերը՝ բնակելի: Մասնաշենքերի ճակատների երեսապատման նյութերը նախատեսված են ցոկոլային հարկերում՝ բազալտ, ճակատները՝ հիմնականում բնական քարից, խառը շարվածքներ, պրոֆիլավոր:

Մուտքային հատվածներում նախատեսված է իրականացնել թեքահարթակներ՝ սակավաշարժ խմբերի համար:

Աստիճանավանդակներում և ավտոհանգրվաններում նախատեսված է ծխահեռացման համակարգ:

Տարածքում նախատեսված է բացօթյա 150 ավտոկայանատեղի:

Բնակելի համալիրի ջեռուցման և տաք ջրամատակարարման համար նախատեսված է կառուցել կաթսայատուն, որը կսպասարկի համալիրի ջեռուցման օդափոխության և տաք ջրամատակարարման համակարգերը: Կաթսայատունը համալրվելու է գերմանական Buderus ֆիրմայի Logano S825L-2500 մոդելի երկու կաթսաներով՝ յուրաքանչյուրը Q=2500Կվտ հզորությամբ:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի գազամատակարարումն իրականացնելու համար կառուցապատողը կդիմի «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերությանը՝ համապատասխան տեխնիկական պայման ստանալու համար:

Համալիրի ջրամատակարարումն ու ջրհեռացումն, ինչպես նաև էլեկտրամատակարարումը կիրականացվեն, համապատասխանաբար, «Վեոլիա Ջուր» և «ՀԷՑ» ՓԲ ընկերությունների կողմից տրամադրված տեխնիկական պայմանի:

Շինարարական աշխատանքները տևելու են 1800 օր, որի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ՝ էքսկավատոր, աշտարակային կռունկ, ավտոկռունկ, բուլդոզեր, ինքնաթափ և այլն: Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարական տեխնիկայի կայանման և շինանյութի պահեստավորման համար ընկերության տարածքի սահմաններում հատկացվելու է մոտ 250մ² ասֆալտապատ տարածք:

Շինարարությունը կատարվելու է կապալային եղանակով՝ համապատասխան մասնագիտացված կազմակերպությունների կողմից: Շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդի մատակարարումը կիրականացվի մասնագիտացված ընկերության կողմից՝ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջանալու են թափոններ՝ կենցաղային (1200-1300կգ) և շինարարական աղբի (1400մ³) տեսքով: Շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Կենցաղային աղբը, պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից: Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի մաքրում՝ աղբից, կեղտոտված բնահողից, վառելիքաքսուկային նյութերից:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Շինարարության ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների, հողի (գրունտի) ջրցանի, շինանձնակազմի խմելու և կենցաղային կարիքների համար:

Ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար: Անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղղորդվեն պարզարան (25մ^3), որտեղ կկատարվի մեխանիկական նստեցում:

Շինարարական աշխատանքների ջրամատակարարումը կիրականացվի է համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից տրված տեխնիկական պայմանի: Բանվորական և անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր սանհանգույցներ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Համաձայն հայտի՝ գործունեության ենթակա տարածքում ծառաթփային բուսականությունը բացակայում է:

Շինարարական աշխատանքների ընթացքում հանվելու է 16000մ^3 ծավալով հողային զանգված, որից 5000մ^3-ը՝ հետլիցքի համար օգտագործելու նպատակով: Ավելացած հողային զանգվածը մասամբ կօգտագործվի տարածքի բարեկարգման համար, իսկ մնացած մասը՝ կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված վայր:

Շինարարության ընթացքում բուսահողը հանվելու և կույտավորվելու է շինարարական հրապարակից դուրս տեղակայված պաշտպանված վայրում:

Շինարարության ավարտից հետո հանված բուսահողը օգտագործվելու է տարածքի կանաչապատման նպատակով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը կիրականացվի՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2018թ փետրվարի 8-ի N 108-Ն որոշման դրույթներով:

Կանաչապատումն իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ՝ համաձայն կանաչապատման նախագծի:

Կանաչապատման մակերեսը 6600մ^2 (40% և ավելի է՝ ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի):

Համաձայն կանաչապատման նախագծի տարածքում տնկվելու են տարածաշրջանին բնորոշ ծառաթփային բուսականություն, այդ թվում՝ կարմիր թխկի, հուդայածառ, գնդաձև սամշիտ, գնդաձև ակացիա, ձիակասկ, կատալպա, բարբարիս, գնդաձև իլենի, փռվող գիհի, սամշիտ և սիզամարգ: Նախատեսվում է կաթիլային ոռոգման ցանց: Ցանցում առկա են կաթիլային ոռոգման հանգույցներ, նաև նախատեսված են ռետինե խողովակներ՝ ոռոգումն ամբողջությամբ կազմակերպելու համար: Ոռոգման նպատակով ջրամատակարարումը կիրականացվի հարևանությամբ անցնող ջրատարից կամ մասնագիտացված ընկերության ավտոցիստեռնով:

Գործունեության իրականացման տեղանքին հարակից տարածքներում արգելոցներ, ազգային պարկեր կամ հատուկ պահպանվող տարածքներ չկան, ինչպես նաև բնութագրվող տարածքում և տարածքի մերձակայքում չկան ազդեցության ենթակա պատմամշակութային հուշարձաններ:

Գործունեության ենթակա տարածքում ՀՀ բուսական և կենդանական աշխարհի Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել :

Նախատեսվող գործունեության կատարման ժամանակ լինելու են շրջակա միջավայրի վրա ազդեցություններ, որոնք հիմնականում կապված են լինելու փորման, բեռնման, հողային, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի, մեխանիզմների շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Համաձայն նախնական գնահատման հայտի, նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում, այդ թվում՝

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով՝ ջրցանի կատարում,
- սորուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրության թաղանթով,
- սորուն շինարարական նյութերի և հողային զանգվածի տեղափոխում՝ փակ ծածկով մեքենաներով,
- շինարարական նյութերի տեղադրում՝ բետոնապատ մակերեսի վրա,
- աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերի ծածկում,
- շինհրապարակում թափոնների տեսակավորում, աղբամանների տեղադրում,
- շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում շինարարական տեխնիկայի լիցքավորում և յուղում,
- հնարավոր արտահոսքերը կանխելու նպատակով հեղուկ նյութերի պահում՝ հատուկ տակդիրների վրա,
- մթնոլորտային օդի արտանետումների որակական և քանակական ցուցանիշների պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ անգամ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից պահպանելու նպատակով հողերի մշտադիտարկում՝ երեք ամիսը մեկ անգամ,
- շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների կանոնների պահպանում և այլն,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- պատշաճ կերպով շինարարական աղբի հավաքում և հեռացում՝ արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 350 հազ. դրամ, իսկ ամբողջ շինարարաության ընթացքում՝ 1750 հազ. դրամ:

Պատճառաբանական մաս

Համաձայն նախնական հայտի, բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կրելու են ժամանակավոր բնույթ՝ պայմանավորված շինարարության փուլով:

Հայտի լրամշակման ընթացքում հաշվի են առնվել նաև տրված դիտողություններն ու առաջարկությունները: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, ինչպես նաև առողջապահության նախարարությունն ու Կոտայքի մարզպետարանը:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Ծաղկաձորի համայնքապետարանի շենքում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում հանրությունը դիտական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Փորձաքննական պահանջներ

1. Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը՝ ըստ հայտով ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
2. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության կանոններն ու նորմերը:
3. Անհրաժեշտ է ապահովել հայտով ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը, պահպանումը և կանաչապատ տարածքների հետագա խնամքը:
4. Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
5. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների հետ համաձայնեցված:
6. Շինհրապարակից դուրս եկող մեքենաները պարտադիր լվանալ, իսկ առաջացած կեղտաջուրը հեռացնել՝ միացնելով ջրհեռացման համակարգին:
7. Պարսպապատել շինարարական հրապարակները, իսկ ներքուստ և արտաքուստ վերանորոգվող շենքերն ու շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով:
8. Կառուցապատման աշխատանքների ընթացքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանել արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը:
9. Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին, հնարավորինս նվազագույնի հասցնելով աղմուկի մակարդակը և ճանապարհների բեռնվածությունը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԱԼՎԻՆԱ ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՓԲ ընկերության կողմից ներկայացված՝ Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքի Խ. Մուրադյան փող. 3 հասցեում «ԱԼՎԻՆԱ» հյուրանոցային համալիրի որպես բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի վերակառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝ Մ. Ավետիսյան/